Կոլասոր գիւղին Մուրատի կը խառնուի, իսկ մեծ ճիւղն Գուփզան գիւղի հարաւային եզրն քերելով դաշտ կիջնայ հարաւ արևմտեան ուղղութեամբ, կանցնի Մանկասար և Խըզըր գիւղի միջից, Նաւիկ և Զամբլու գիւղերու հարաւից, Խրիցու գիւղի (Ջաջուռ իշխանի Խրիցու գիւղ) արևելքից իջնող ցօտօ ջրոյն միանալով քօր գետ անուամբ կանցնի Գարաքիլիսէի արևելքից, նաև հարաւային եզրն քերելով՝ յարևմուտս շեղուելով, կը խառնուի Դաշլի գետոյն և կը թափին Մուրատի մէջ։

Բաց ի այս գետակներէ որ մշտական ջուր ունին և ժողովուրդն գետ կանուանէ, կան նաև ջուր ասուած գետակներ, որք բազմաթիւ են, ամրան կը չորանան։

Նաև կան անհաշիւ ձորակներ, առու և առուակներ, որք երբեմն ուղղակի Շեռեանայ և Մուրատի մէջ կը թափին կամ գետակներից միայն միանալով սնունդ կը տան։

ԼԻՃ ԵՒ ԼՃԱԿՆԵՐ

Ջրաբաշխի շղթայն իւր վերայ կը կրէ մեծ և փոքր լճեր, որ շղթայի վրան, կամ այս ու այն երեսին վերայ զետեղուած են։

Ալաշկերտի արևելեան կողմ Սինակ լեռներով շրջապատուած կայ Պալը-կօլ (ձկան լիճ) ծովակն, որ է Գայլատոյ լիճն, և ունի բարձր դիրք, 3—4 ժամ շրջապատ, առատ և ընտիր ձուկ. յարդի է խոշոր կարմրախայտն, հիւսիսային եզրին մօտ գտնուած կղզեակին վերայ կը տեսնուի Վարդանակերտ կոչուած բերդի բեկորներն։